

ուր եօթը տարի տառապելէ ետքն իր սիրելի եղբայրակցին<sup>(1)</sup> Կաստիլյայի թագաւորին շնորհիւ ազատուեցաւ : Վերջը խօսքն ուղղելով Յովհաննէսի՝ հետեւեալ ազաչանքն ըրաւ . « Յոյժ սիրեցեալ աէր եւ եղբայրակից, Որովհետեւ Աստուած Ձեր միջոցով հաճեցաւ փրկել զիս բանտէ , ուսկից բոլորովին մերկ կացութեան մէջ դուրս ելած եմ , խոնարհաբար կը խնդրեմ Ձեզմէ — որ բոլոր աշխարհի ծանօթ էք Ձեր զօրութիւնովն ու առատաձեռնութիւնով — որպէս զի հաճիք օգնել եւ նեցուկ ըլլալ ինձ իմ զիրքս պահպանելու եւ թագաւորութիւնս վերականգնելու . խկ ես եւ իմիններս՝ մինչեւ մեր վերջին շունչն երախտապարտ պիտի մնանք թէ՛ Ձեզ եւ թէ Ձերիններուն<sup>(2)</sup> : » Այս խօսքերէն Յովհաննէսի գութը շարժեցաւ եւ յայտարարեց , որ Հայոց թագաւորին կը նուիրէ Մաղբիդ , Վիլլարէալ ու Անդուխար քաղաքները , որպէս զի Լեւոն անոնց եկամուտներովը — որոնք տարեկան 150,000<sup>(3)</sup> մարաբալինեան (maravédis) դահեկան կը բերէին — իր զիրքին համաձայն ճոխութիւնով՝ իրբեւ թագաւոր Հայոց եւ իրբեւ տանուաէր<sup>(4)</sup> այդ երեք քաղաքներու՝ ապրի մինչեւ իր կեանքին վերջը :

(1) Ֆրանսերէն բառն է՝ cousin, զոր Դարդելի հայ քարգմանիչը սխալ կերպով « հօրեղբորոդի » քարգմանած է սակեմ տեղ ալ : Բայց ո՛չ Կաստիլյայի ո՛չ Ֆրանսայի եւ ո՛չ Անգլիայի քաղաւորներն արեւակցական խնամութիւն ունեցած են Լեւոնի հետ , այլ Ֆրանսական քաղաւորներու սովորութեան համեմատ քաղակից մը cousin՝ այսինքն եղբայրակից կամ մտերիմ անուանած է Լեւոն : Մինչև հիմա ալ Ֆրանսական գաւառներու մեջ cousin կամ cousine կրտսեր իրարու , ի նշան մտերմութեան :

(2) Դարդել , եր. 192-193 : Վերը չակերտներու մեջ դրուած « ի սեր քրիստոնէութեան » բառերը կը մասնեն քէ Լեւոն կեղծաւորութիւն կրնէր ժողովականներու առջեւ . վասն զի մենք գիտենք որ Լեւոն մեղքեղութիւններով ձեռք անցուց Հայոց քաղաւորութիւնը , ինչպէս տեսնուի եր. 40-41 :

(3) 100,000 կը դնէ Դարդել : Ես կը կարծեմ քէ սպանիացի պատմիչներու եւ Դարդելի միջեւ հակասութիւն մը կայ . վասն զի Սպանիացի միաբերան կրտսեր քէ Յովհաննէս Ա սարեկան 150,000 մարաբալի բոցակ կուտար Լեւոնի , առանց յիշատակելու վերի երեք քաղաքներու սարեկան եկամուտը . Դարդել ալ Յովհաննէսի յատկացուցած սարեկան բոցակը չի յիշեր . ուրեմն՝ կենքադրեմ , որ Յովհաննէսի տուած սարեկան բոցակն ուրիշ բան չէր , այլ նոյն երեք քաղաքներու եկամուտը՝ սարեկան 150,000 մարաբալիներու դահեկան :

(4) Սպանիական պատմիչներէ տեսնուի , ինչպէս Gil Gonzalez Dauila (Teatro de las grandezas de la villa de Madrid, եր. 152) եւ ուրիշ անանուն